ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ՔՀԿ ոլորտի երիտասարդական աշխատողների, վերապատրաստողների, ծրագրի համակարգողների համար

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերից և Երևանից

Հուլիսի 18, 2023 թ.

<<ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում>> (STRIVE) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, այն իրականացնում է ՆԵՖ Բելգիան (NEF)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների.

• <<ԱԳԱԹ>> հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ,

• <<ԲԼԵՋԱՆ>> բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ,

• <<ՎԻՆՆԵԹ Գորիս>> զարգացման հիմնադրամ,

• <<Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն>> ՀԿ:

“STRIVE" ծրագիրը նպատակ ունի բարելավել Հայաստանի ՔՀԿ-ների կայունությունը, հաշվետվողականությունը և նորարարության կարողությունները՝ հնարավորություն տալով նրանց առանցքային դեր ունենալ իրազեկության բարձրացման, ժողովրդավարության ամրապնդման գործում:

Վերապատրաստողների վերապատրաստման դասընթացների շարքը նախատեսված է իրականացնել նշված բոլոր մարզերում և Երևան քաղաքում 8-12 երիտասարդական աշխատողների, վերապատրաստողների, ծրագրի համակարգողների համար, ովքեր աշխատում են Հայաստանի ցանկացած տարածաշրջանային ՔՀԿ-ում կամ հանդիսանում են

անհատ դասավանդողներ և ցանկանում են ընդգրկվել ***Կազմակերպական մոդելների ինովացիա*** (OMI)[1] բաղադրիչի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացներին և ընդգրկվելու այդ բաղադրիչի շարունակական գործողություններում, այդ թվում մենթորային ցիկլերի անցկացման գործընթացում:

Նշված վերապատրաստման դասընթացների նպատակն է՝ վերապատրաստել ՔՀԿ ներկայացուցիչներ, ովքեր կնպաստեն զարգացնելու և տարածելու OMI բաղադրիչի կիրառումը այլ ՔՀԿ-ների շրջանում՝ Մենթորային ցիկլերի միջոցով: Վերապատրաստման դասընթացները կիրականացվեն եռօրյա աշխատանքային հանդիպումների միջոցով, որոնց ընթացքում մասնակիցներին կներկայացվեն հետևյալ երեք մոդուլները՝ <<Ֆինանսական մոդելներ և կայունություն>>, <<Հասարակայնության հետ կապեր և ռազմավարական հաղորդակցություն>>, <<ՔՀԿ հաշվետվողականություն և թափանցիկություն>>: Դասընթացները կիրականացվեն՝ կարևորելով մասնակիցների մասնակցայնությունը և նորարարության խթանումը:

Ծրագրի այս ենթաբաղադրիչին կհաջորդեն Մենթորային ցիկլերը, որոնց հիմնական արդյունքը կլինի OMI ռազմավարության պլանների մշակումը, և այդ գործընթացին մասնակից կդառնան վերապատրաստման դասընթացի մասնակիցները՝ վարելով թվով 10 մենթորային ցիկլեր 15-ՔՀԿ-ների 45 ներկայացուցիչների համար:

Դասընթացի մասնակցները կընտրվեն հետևյալ չափանիշների հիման վրա՝

- Երիտասարդական աշխատողի/վերապատրաստողի/ ծրագրի համակարգողի աշխատանքային փորձ
- Դասընթաց/սեմինար պլանավորելու, կազմակերպելու վարելու փորձ
- Նախագծերի նախագծման և քոուչինգի փորձ
- Պատրաստակամություն՝ կիսվելու այլ ՔՀԿ-ների հետ վերապատրաստման ընթացքում ձեռքբերված գիտելիքներով, OMI-ի մոդելով
- Ցանկություն և կարողություն՝ լինելու Մենթորության ցիկլեր կազմակերպող թիմի անդամ և աջակցելու այլ ՔՀԿ-ներին՝ մշակելու իրենց OMI ռազմավարական պլանները:

[1] “STRIVE” ծրագրի OMI բաղադրիչը կառուցվածքային և ինտենսիվ կազմակերպական կարողությունների զարգացման գործընթաց է, որը սկսվում է մասնակցային գնահատումներով և վերապատրաստման մոդուլներով՝ միտված ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը:

Այլ որակավորումներ և հմտություններ.

- Հայոց լեզվի լավ իմացություն
- Վարժ գրելու հմտություն
- Վերլուծական հմտություն
- Հաղորդակցման հմտություն
- Անհատական և թիմային աշխատանքի կարողություն
- Անգլերենի իմացությունը ցանկալի է:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցել ցանկացող անձինք կարող են մինչև **հուլիսի 28-ը** իրենց դիմում հայտը և ինքնակենսագրականը (CV) ուղարկել հետևյալ էլ-փոստի հասցեին՝ info@blejanngo.org

Հ այ տառ և

Խնդրում ենք անցնել հայտարարության ներքևի հատվածում տեղադրված հղումով

Գեղարքունիքի մարզի դիմորդների համար.

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 077764641